

Ձոռի հրդեհից



3



5

Խաղա՞լ, թե՞ չխաղալ...



Օգտակա՞ր է, թե՛ ոչ

7



8

Չրեղեն... կրեսոլ

ISSN 1829-149X



ով իրագրելված է, նա թաշտղանված է

# Արտակարգ թերթ

N 20 (293)

5.6.2009 - 11.6.2009

www.emergency.am

## Օդային աղետ

«Էյրֆրանսի» կործանումն Արլանտյան օվկիանոսում



**Շաբաթվա սկզբին աշխարհի բոլոր լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում Բրազիլիան էր: «Էյր Ֆրանս» ավիաընկերությանը պատկանող Airbus A-330-200 ինքնաթիռը, որն իրականացնում էր Ռիո դե Ժանեյրո - Փարիզ չվերթը, այդպես էլ տեղ չէր հասել:**

Քննարկվում էին ինքնաթիռի անհետացման բոլոր հնարավոր վարկածները՝ դեռ հույս կար, որ այն անվնաս կհայտնվի որևէ երկրի օդային տարածքում: Սակայն երկու օր անց Ատլանտյան օվկիանոսում որոնողական խմբերը մետաղի բեկորներ հայտնաբերեցին: Աղետի փաստն այժմ հաստատված է: Ուղեւորների մարմինները դեռ չեն հայտնաբերվել: A-330-ի աղետը վերածվել է միջազգային ողբերգության՝ ինքնաթիռում կային Իտալիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Չինաստանի, Շվեյցարիայի, Սարոկոյի, Իռլանդիայի, Կանադայի, Էստոնիայի, Շվեդիայի, Թուրքիայի, Բելգիայի, Բրազիլիայի, Հունգարիայի, Նորվեգիայի, Հարավային Կորեայի, Արգենտինայի եւ Խորվաթիայի քաղաքացիներ:

Ինքնաթիռում եղել են 216 ուղեւոր (82-ը՝ կանայք, 126-ը՝ տղամարդիկ, 8-ը՝ երեխաներ, այդ թվում մեկը՝ նորածին) եւ անձնակազմի 12 անդամներ: Համար 447 չվերթը օդ է բարձրացել կիրակի երեկոյան եւ պետք է վայրէջք կատարեր «Ռուսասի-Շառլ դը Գոլ» օդանավակայանում՝ տեղական ժամանակով 11:10-ին:

### Ի՞նչ էր պատահել

«Ինտերֆաքս»-ի վերջին տվյալների համաձայն ինքնաթիռից ազդանշաններ են ստացվել սրահի էլեկտրացանցում կարճ միացման մասին, այն բանից հետո,

երբ վերջինս հայտնվել է ուժեղ մրրկային հոսանքի գոտում: Ինչպես մեկնաբանել են ավիաընկերությունում, այդ ազդանշանները տրվում են ավտոմատ ռեժիմով:

«Էյր Ֆրանս»-ի մամուլի ծառայության տնօրեն Ֆրանսուա Բուսարը հայտարարել է, որ հնարավոր է ինքնաթիռն կայծակ է խփել, ինչի հետևանքով էլ տեղի է ունեցել աղետը: «Վերջին կապի ժամանակ ավագ օդաչուն հայտնեց մրրկային ուժեղ հոսանքի գոտի մտնելու մասին, եւ դրանից հետո ռադիոկապն ինքնաթիռի հետ ընդհատվեց»:

Սակայն օդազնաչության ֆրանսիական փորձագետներից մեկը հարցազրույցի ժամանակ ասել է, որ նման դասի ինքնաթիռը չէր կարող աղետի ենթարկվել միայն կայծակի հարվածից: Նա ընդունում է, որ սարքերի մի մասը կարող էր շարքից դուրս գալ, բայց աղետալի հետևանքների կարող էր հանգեցնել մի այլ բան՝ օրինակ, բախումը մեկ այլ օբյեկտի հետ:

Բրազիլական օդուժի տվյալներով, անձնակազմը վերջին անգամ կապի մեջ է եղել թռիչքից երեք ժամ անց՝ տեղական ժամանակով 22:33-ին: Դրանից 15 րոպե հետո, 22:48-ին A-330-ը դուրս է եկել Ֆերնանդու-դի-Նորոնյա արշիպելագի տարածքից՝ բրազիլական ռադարների ազդեցության գոտուց եւ մտել է Դաբարի (Սենեգալ) դիսպետչերների հսկողության գոտի: 23:14-ին եղել է կարճ միացման մասին ազդանշանը, որից հետո ինքնաթիռը այլևս չի եղել:

չանը, որից հետո ինքնաթիռից այլևս լուր չի եղել:

Ավիացիայի բրազիլացի փորձագետների կարծիքով «Էյր Ֆրանս»-ի ինքնաթիռի հետ տեղի ունեցածը բավական տարօրինակ է, քանի որ նման բարձրության վրա՝ 11 հազար կմ, աղետի են ենթարկվում ինքնաթիռների միայն 10 տոկոսը:

Այսօր արդեն որոնողական խմբերի օդաչուները հայտնաբերել են ինքնաթիռի մոր բեկորներ, այդ թվում նաեւ իրանի յոթ մետրանոց մի հատված: Դրա կողքին հեղուկ վառելիքի հսկայական մի բիծ է՝ մոտ 20 կմ²:

Օդաչուները նշում են, որ բեկորների մի մասը հայտնաբերվել է աղետի ենթադրվող վայրից 100 կմ հեռավորության վրա: Այս տեղեկատվությունը հաստատում է մասնագետների այն մտավախությունը, որ ստորջրյա ուժեղ հոսանքները կարող են լուրջ խոչընդոտ լինել աղետի հետքերի որոնման համար:

Դրան է զուգարկվում նաեւ այդ տարածքում Ատլանտյան օվկիանոսի լեռնային ռելիեֆը: Այդ պայմաններում «սեւ արկղերի» հայտնաբերման հավանականությունը գրոյական է:

Ճգնաժամային կենտրոններում, որոնք բացվել են բրազիլական միջազգային «Գալեան/ ԱՆ-տոնիու Կառլոս ժոբին» օդանավակայանում ու Ռիո դե Ժանեյրոյի հյուրանոցներից մեկում, հավաքվել են տասնյակ մարդիկ: Նրանցից շատերը հոգեբանական օգնության կարիք ունեն:

Ճգնաժամային կենտրոն է բացվել նաեւ Փարիզի օդակայանում: Նախագահ Նիկոլայ Սարկոզին կոչ է արել անել հնարավոր ամեն ինչ աղետի պատճառները պարզելու համար:

Բրազիլիայի նախագահ Լուիս Ինասիու Լուլա Սիլվան հրաժարվել է մասնակցել Սալվադորի նախագահ Մաուրիսիու Ֆուլենսի երդման արարողությանը: Նա հեռախոսազրույց է ունեցել նախագահ Սարկոզիի հետ: «Մենք ցավակցություններ փոխանակեցինք, քանի որ դեռ հստակ չգիտենք, թե իրականում ինչ է տեղի ունեցել», - ասել է դա Սիլվան:

Անհետացած ինքնաթիռը շահագործվում էր 2005 թվականից, վերջին տեխնիկական ստուգումն անցել էր ապրիլի 16-ին:

Այս եւ մյուս երկուշաբթի օրերին, ժամը 19.00-ին, 32 հեռուստաընկերության եթերում է «Արտակարգ ալիքը»

Կրկնությունը՝ ուրբաթ, ժամը 13.30-ին: Հունիսի 8-ին կարող եք դիտել.

Կլիմայական փոփոխություններ, գլոբալ տաքացում, օդի աղտոտվածություն ... Ինչպիսի՞ն կլիմի Հայաստանի եւ ողջ մոլորակի կլիման 2030 թ.-ին: Հունիսի 5-ը շրջակա միջավայրի պահպանության համաշխարհային օրն է: Տոնի այս տարվա կազմախումբն է «Միավորվենք՝ փրկելու մեր մոլորակը»:

Կանխատեսումների համաձայն արդեն 2020 թվականին ծխախոտը կդառնա հիվանդությունների եւ մահերի գլխավոր պատճառներից մեկը՝ ամեն տարի խլելով մոտ 10 միլիոն մարդու կյանք: Իսկ ինչպիսի՞ն է իրավիճակը Հայաստանում:



Զգտում եւ փորձ. ու գործը հաջողությամբ կպատկվի: 16 տարի շարունակ այս սկզբունքով է աշխատում հրշեջ Աշոտ Գեղամյանը, փորձառու գործընկերոջ կողքին ավելի վստահ է զգում Գարիկ Ավետիսյանը: Նրանք երկուսն էլ մասնակցել են «Նաիրիտի» հրդեհաշիջման աշխատանքին:

Այս եւ այլ թեմաների մասին՝ երկուշաբթի, 19.00-ին, 32-ի եթերում:

### «Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում: Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպը» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



**Հայաստանի փրկարար ծառայությունը զանգահարեք**

**1-01, 1-12**

## Արփան եւ Եղեգիսը դուրս են եկել ափերից

Մայիսի 29-ին, ժամը 10.15-ին Վայոց ձորից տեղեկություն է ստացվել, որ Արփա գետը ափերից դուրս է եկել եւ ողողել Եղեգնաձորի մերձակայքում գտնվող խաղողի այգիները, իսկ Եղեգիս գետը՝ Գետափ համայնքին պատկանող Գետափ-Մարտունի ավտոճանապարհին հարակից մշակովի հողատարածքները:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը: Դեպքի մասին տեղյակ են պահվել մարզպետարանի աշխատակիցները:

## Ջրածածկման վրանգ

Հունիսի 1-ին, ժամը 12.00-ին Արարատի մարզի Բուրաստան գյուղից տեղեկություն է ստացվել, որ Ազատ գետի ջրի

մակարդակի բարձրացման հետևանքով հարակից հողամասերին վտանգ է սպառնում:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը:

Տեղում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Ազատ գետին հարող տնամերձ հողամասերը եւ կից հացատունը ջրաողողման վտանգի տակ են:

Ջրամբարի ղեկավարությանը եւ Բուրաստանի գյուղապետին տրվել են համապատաս-



խան հանձնարարականներ՝ վտանգը կանխելու ուղղությամբ:

## Վրանգը կանխվել է

Մայիսի 31-ին, ժամը 11.16-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ Միխայլովկա գյուղի մոտ գտնվող ջրավազանում (16 խմ ծավալով) ջրագծերի փակվածների անսարքության հետևանքով ջրի մակարդակը բարձրացել է, եւ ջուրը լցվում է բնակիչների տները:

Դեպքի վայր է մեկնել մեկ

մարտական հաշվարկ:

Հրշեջ-փրկարարների կողմից ջրավազանից կատարվել են ջրահեռացման աշխատանքներ, իսկ «Հայջրմուղ» ՓԲԸ Տաշիրի մասնաճյուղի աշխատակիցները վերանորոգել են ջրավազանի փակվածները:

## Օձի խայթոց

Մայիսի 27-ին, 19.45-ին Վայոց ձորի մարզից տեղեկություն է ստացվել, որ օձի խայթոցով Եղեգնաձորի հիվանդանոց է տեղափոխվել Ջերմուկի բնակչուհի, 1936 թ. ծնված Արփիկ Թադևոսյանը:

Ըստ բժիշկների՝ Ա. Թադևոսյանի առողջական վիճակը բավարար է:

## Դեղորայքային թունավորում

Մայիսի 28-ին, ժամը 20.50-ին հոգեմետ դեղամիջոցների թունավորումով Լոռու մարզի Վանաձորի թիվ 1 հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի Իսահակյան փողոցի թիվ 11/29 տան բնակիչ, 1974 թ. ծնված Սամվել Քարամյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը բավարար է:

## Թունավորում սնկից

Մայիսի 29-ին, Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 04.10-ին սնկից թունավորումով Գյումրիի ինֆեկցիոն հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի Ռեպինի փողոցի թիվ 217/091 տնակի բնակիչ, 1933 թ. ծնված Մերուժան Հակոբյանը: Ավելի ուշ Մ. Հակոբյանը տեղափոխ-

վել է Գյումրիի «Սամարիթեր» հիվանդանոց:

Բժիշկների կողմից տուժածի վիճակը գնահատվում է բավարար:

## Ծառը հենվել է շենքի փանիքին

Մայիսի 29-ին, ժամը 12.50-ին ահազանգ է ստացվել, որ Շիրակի մարզում, Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոցում քանու հետևանքով ծառ է կոտրվել եւ ընկել թիվ 17 շենքի տանիքին:

Տեղում պարզվել է, որ մոտ 10 մ բարձրությամբ չորացած ծառը, հիմքից կոտրվելով, թեքվել ու հենվել է եռահարկ շենքի տանիքին՝ առանց զգալի վնասներ պատճառելու:

Գյումրիի քաղաքապետարանի ուժերով ծառը մասնատվել է եւ տեղափոխվել:

## Ուժեղ քամի

Մայիսի 29-ին Շիրակի մարզից ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 12.00-ից մինչև 12.30-ը մոլեգնած ուժեղ քամին զգալի վնաս է պատճառել Բյուրակն համայնքի բնակելի տներին:

Ուժեղ քամու հետևանքով հիմնովին քանդվել են համայնքի բնակիչներ Վ. Համազարյանի եւ Գ. Մշեցյանին պատկանող տների տանիքները՝ համապատասխանաբար 140 քմ եւ 100 քմ մակերեսով, ինչպես նաեւ մասնակիորեն վնասվել են 5 տան տանիքներ, շրջվել է 2 փայտե էլեկտրասյուն:

Դեպքի մասին տեղյակ է պահվել Շիրակի փոխմարզպետ Մ. Վարդանյանը:

## Կարկուղ

Մայիսի 29-ին Շիրակի մարզի Մեղրաշատ համայնքից տեղեկություն է ստացվել, որ ժամը 13.00-ից մինչև 14.00-ը տեղացած ուժեղ կարկուտը վնասել է համայնքի աշնանացան ցորենի ու գարու ցանքատարածքները՝ մոտ 100 հա ընդհանուր մակերեսով:

## Փլուզումներ

### Սյունիքում

Մայիսի 29-ին, ժամը 10.10-ին Սյունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ ինքնափլուզվել են Քարահունջ համայնքի բնակիչ Բ. Բաղդասարյանին պատկանող անասնագոմի պատն ու տանիքը՝ համապատասխանաբար 21 քմ եւ 35 քմ մակերեսով, ինչի հետևանքով վնասվել է մեկ խոշոր եղջերավոր անասուն:

Գուղապետարանում ստեղծվել է հանձնաժողով՝ վնասի չափը ճշտելու նպատակով:

### Շիրակում

Հունիսի 2-ին Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ ինքնափլուզում է տեղի ունեցել է Գյումրիի 26 Կոմիսարների 105 հասցեում:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը:

Տեղում պարզվել է, որ ինքնափլուզվել է Վաչագան Նիկոլյանին պատկանող, մեկ հարկանի քարաշեն տան հյուրասենյակի փայտյա ծածկը՝ 2 քմ մակերեսով: Նշենք, որ տունը կառուցվել է 1950 թ. եւ համարվում է 3-րդ աստիճանի վթարային >>> 3

# միջազգային լուրեր

## Պայթյուն հանքում

Չինաստանի Չոնգին քաղաքի ածխահանքում տեղի ունեցած պայթյունի հետևանքով զոհվել է առնվազն 25



մարդ, եւս 20-ը մնացել են փրկարարներում:

Պայթյունի պահին հանքահորում գտնվում էր 131 մարդ, նրանցից 86-ին հաջողվել է ինքնուրույն դուրս գալ հանքից:

Չինաստանի ածխարդյունաբերությունն աշխարհի ամենավտանգավորներից է: Երկրի իշխանությունները խոստացել են արդիականացնել արդյունաբերության այս ճյուղը՝ այն ավելի անվտանգ դարձնելու համար, սակայն առայժմ այդ խոստումներն իրականություն չեն դարձել:

Կիրակի օրը Հարավաֆրիկյան հանրապետության ոսկե հանքերից մեկում բռնկված հրդեհի զոհ է դարձել առնվազն 61 մարդ: Նրանք բոլորը հանքի անօրինական աշխատողներ էին: Նախնական տվյալներով՝ մարդկանց մահվան պատճառը գազից կամ ծխից թունավորումն է: Վերջին օրերին նշված վայրում ոստիկաններն արդեն ձերբակալել էին ավելի քան 300 անօրինական հանքափորի:

## Խոզի գրիպը նոր երկրներ է նվաճում

Մայիսի 31-ին Թուրքիայի առողջապահության նախարարությունը հայտարարել է երկրի տարածքում խոզի գրիպի վիրուսի առաջին երկու դեպքի մասին: A/H1N1 վիրուսը հայտ-



նաբերվել է մի քանի օր առաջ Նյու Յորքից վերադարձած երկու մարդու մոտ: Հիվանդները մեկուսացվել են եւ գտնվում են բժիշկների մշտական հսկողության տակ:

Խոզի գրիպի վիրուսով մարդու վարակման առաջին դեպքն է արձանագրվել նաեւ Բուլղարիայում: Հիվանդը Բուլղարիայի քաղաքացի է, որը նախօրեին վերադարձել էր ԱՄՆ-ից:

Վերջին տվյալներով՝ ԱՄՆ-ում վտանգավոր վիրուսով վարակվածների թիվն անցել է 10 հազարը: A/H1N1-ի դեպքեր են արձանագրվել երկրի բոլոր նահանգներում: Հիվանդության զոհ է դարձել 17 մարդ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ հունիսի 3-ի դրությամբ աշխարհում գրանցվել է խոզի գրիպի վիրուսով վարակման 19 273 դեպք, զոհվել է 117 մարդ:

## Փոթորիկ Մոսկվայում

Հունիսի 3-ին Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայի տարածքով ուժգին փոթորիկ է անցել, որն ուղեկցվել է անպրո-



պով ու կարկուտով: Փոթորկային քամին լուրջ ավերածություններ է գործել քաղաքի տարբեր թաղամասերում:

Երեկոյան քամուց պոկված էլեկտրական լարերի կայծերից մի քանի ավտոտնակ է բռնկվել: Հրդեհաշիջումը տեւել է շուրջ մի քանի ժամ, քանի որ քամին խանգարել է հրշեջների աշխատանքին: Հասցված վնասի չափերը ճշտվում են:

Հինգշաբթի օրը եւս Մոսկվայում անձրեւ ու անպրոպ կլիմի, կզրանցվի օդի ջերմաստիճանի կտրուկ նվազում:

## Պատահար գիշերային ակումբում

Մոսկվայի «Դրախտ» գիշերային ակումբում կիրակի գիշերն այցելուների վրա ընկել է ակումբի մեծ ջահը: Պատահարի հետևանքով տուժել է յոթ մարդ, նրանցից երեքը տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Պատահարի պատճառները եւ հանգամանքները ճշտվում են:

## Փնայքը բախվել է ավերուսիսի

Հունիսի 2-ին խոշոր երկաթուղային պատահար է գրանցվել Չինաստանում: Միկրոավտոբուսի եւ գնացքի բախման հետևանքով զոհվել է ինը մարդ, եւս ինը ստացել են



տարբեր մարմնական վնասվածքներ:

Պատահարը տեղի է ունեցել երկրի Ուհան կենտրոնական նահանգում՝ երկաթուղային գծանցի վրա: Վթարի զոհերի թիվը դեռ կարող է աճել, քանի որ տուժածներից չորսը ծայրահեղ ծանր վիճակում են:

Ամեն տարի Չինաստանում ճանապարհատրանսպորտային պատահարների զոհ է դառնում առնվազն 100 հազար մարդ:

Ֆահնա Թյունիբաբյան



Հինություն: Պատահարի հետևանքով գոհեր եւ տուժածներ չկան:

Դեպքի մասին տեղյակ է պահվել Գյումրիի քաղաքապետարանը:

### Տուժել է Իրանի քաղաքացի

Մայիսի 29-ին, ժամը 00.23-ին Կապան քաղաքի ոստիկանության բաժնից ահազանգ է ստացվել, որ Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 339-րդ կմ-ին տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պահատար, եւ անհրաժեշտ է փրկարարներ ուղարկել:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ եւ մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում՝ «Մերսեդես» մակնիշի THF-80574 պետհամարանիշի վառելիքատար ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթուղուց եւ անհրաժեշտ է գլորվել ձորը: Գլանատակառ ղա-



տարկ է եղել եւ հրդեհ չի բռնկվել: Վարորդը՝ Իրանի Զանրապետության քաղաքացի, 1965 թ. ծնված Զասան Ֆարշ Թրաշը, ստացել է տարբեր մարմնական վնասվածքներ ու հայտնվել դժվարհասանելի տեղանքում:

Փրկարարների ուժերով տուժածը դուրս է բերվել ձորից եւ տեղափոխվել Քաջարանի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը ծանր է:

### Ճրջվել է Գաքսի

Մայիսի 30-ին Կոտայքի մարզից տեղեկություն է ստացվել, որ Աղավան-Ռազմազան ավտոճանապարհին շրջվել է «Տաքսի պլուս» տաքսի ծառայությանը պատկանող «ՎԱԶ-21074» մակնիշի S 5916 պետհամարանիշի ավտոմեքենան:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը:

Փրկարարներն ավտոմեքենայից դուրս են բերել վարորդը՝ Երեւանի Ջրվեժ բանավանի 7-րդ շենքի թիվ 16 բնակարանի



բնակիչ, 1972 թ. ծնված Արմեն Թովմասյանի դիակը:

### Մեքենան հարվածել է պարիսպին

Մայիսի 30-ին, ժամը 08.30-ին ոստիկանությունից տեղեկություն է ստացվել, որ Երեւան-Մասիս ավտոճանապարհին՝ Այնթափ գյուղի մերձակայքում, տեղի է ունեցել ավտոպատահար:

Դեռեւս չպարզված հանգամանքներում՝ «ՎԱԶ-2107» մակնիշի 15 ՕՏ 059 պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթուղուց եւ հարվածել պատին:

Դեպքի վայր մեկնած փրկարարները ավտոմեքենայից դուրս են բերել վարորդի՝ Արտաշատի բնակիչ, 1989 թ. ծնված Արսեն Խաչատրյանի դիակը:

### Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարբերույթ հրդեհների 30 դեպք:

### Հրդեհի հացափայտը

Մայիսի 29-ին, ժամը 00.01-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Արշակունյաց պողոտայի թիվ 210/1 հասցեում՝ շինանյութի շուկայում:

Դեպքի վայր է մեկնել Երեւանից երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 00.18-ին, մարվել՝ 00.31-ին:

Այրվել է շուկայի տարածքում գտնվող Ա. Մարդյանին պատկանող հացատան խոհանոցը՝ 15 քմ մակերեսով:

### Այրվել է փանիք

Մայիսի 29-ին, ժամը 16.11-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Արաբկիրի 37 փողոցի թիվ 10 տանը:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ, ինչպես նաեւ փրկարար ուժերի վարչության օպերատիվ խումբը: Հրդեհը մեկուսացվել է ժամը 16.27-ին, մարվել՝ 16.39-ին:

Այրվել է Ք. Գեւորգյանին պատկանող տան տանիքը՝ 5 քմ մակերեսով:

### Ջուր հրդեհից

Մայիսի 29-ին, ժամը 22.25-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Կոտայքի մարզում՝ Աբովյանի Սարալանջի փողոցի 7-րդ շենքի թիվ 7 բնակարանում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 23.05-ին, մարվել՝ 23.41-ին:

Այրվել են Տոմա Կատարյանին պատկանող բնակարանի հյուրասենյակը, խոհանոցը եւ միջանցքը՝ 42 քմ ընդհանուր մակերեսով:

Բնակարանում հայտնաբեր-



վել է 1947 թ. ծնված Տ. Կատարյանի դիակը:

### Այրվել է խորհանոց

Հունիսի 1-ին, ժամը 12.14-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Նոր Արեշի 35-րդ փողոցի թիվ 46 տանը: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 12.38-ին, մարվել՝ 12.43-ին:

Է. Ղարախանյանին պատկանող տան բակում այրվել է խորհանոց՝ 15 քմ մակերեսով:

### Հրդեհ գտնում

Հունիսի 2-ին Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 17.49-ին հրդեհ է բռնկվել Աշտարակի Երվանդ Շահազիզյան փողոցի թիվ 2 տանը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 18.15-ին, մարվել՝ 18.30-ին:

Այրվել է Ն. Ղոնախչյանին պատկանող անասնագոմի 25 քմ մակերեսով տանիքը եւ պահեստավորված 100 կգ ծղուտ:

### Տանփերն այրվածքներ է ստացել

Հունիսի 3-ին, ժամը 16.17-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Կոնիկի փողոցի (Ազատամարտիկների նրբանցք) թիվ 18 տանը:

Դեպքի վայր է մեկնել Երեւանից մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 16.39-ին, մարվել՝ 16.52-ին:

Այրվել է տան խորհանոցը՝ 40 քմ մակերեսով:

Հրդեհի հետևանքով դեմքի այրվածքներ է ստացել տանտերը՝ 1964 թ. ծնված Ստեփան Սարաֆյանը, որին 1-03 ծառայության կողմից տեղում ցուցաբերվել է առաջին բուժօգնություն:

### Այրվել է խոր

Հունիսի 3-ին, ժամը 16.20-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Սարի Թաղի 13-րդ փողոցին հարակից տարածքում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 16.42-ին, մարվել՝ 16.49-ին:

Հրդեհի երկու տարբեր օջախներում այրվել է 50 քմ մակերեսով խոտ:

### Գոհար Բաղդասարյան

## սեյսմիկ պաշտպանություն

Ս. ք. մայիսի 27-ից մինչեւ հունիսի 3-ը ՄՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են մեկ երկրաշարժ: Այն տեղի է ունեցել հունիսի 2-ին Աշոց գյուղից 6 կմ դեպի հյուսիս-արեւելք, եւ ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3-4 բալ:

**Տարածաշրջանում.** 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել վեց երկրաշարժ: Մայիսի 27-ին Թուրքիայում, Կարս քաղաքից 45 կմ դեպի հարավ, գրանցվել է 2 երկրաշարժ, որոնց ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 5 բալ: Նույն օրը 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ է տեղի ունեցել Իրանի Խոյ քաղաքից 5 կմ դեպի հյուսիս-արեւմուտք: Մայիսի 30-ին Խոյ քաղաքից 14 կմ դեպի հյուսիս-արեւմուտք գրանցվել է 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Նույն ուժգնությամբ մյուս իրադարձությունը տեղի է ունեցել հունիսի 2-ին Վրաստանի Դմանիսի քաղաքից 6 կմ դեպի հյուսիս-արեւելք, ինչը զգացվել է Ալավերդի քաղաքում 3 բալ ուժգնությամբ: Այդ օրը Թուրքմենստանի Թուրքմենբաշի քաղաքից 23 կմ

դեպի հյուսիս գրանցվել է երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 5 բալ:

**Տարածաշրջանից դուրս.** 6 եւ ավելի մագնիտուդով տեղի է ունեցել երկու ուժեղ երկրաշարժ: Մայիսի 28-ին Կարիբյան ծովում, Հոնդուրասի Լա Սեյթա քաղաքից 116 կմ դեպի հյուսիս-արեւելք, գրանցվել է 7.1 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Աղետի հետևանքով գոհվել է 6 մարդ, վիրավորվել 23-ը, ավերվել են տասնյակ շինություններ, լուրջ վնասվել է Ռլուա գետի կամուրջը, անջատվել է էլեկտրականությունը: Ստորգետնյա զվիսավոր ցնցումից անմիջապես հետո ցունամիների նախագուշացման խաղաղօվկիանոսյան կենտրոնի հայտարարությանը տարահամվել են Հոնդուրասի, Գվատեմալայի եւ Բելիզի ափամերձ քաղաքների բնակիչները: Մեկ այլ ուժեղ երկրաշարժ է գրանցվել հունիսի 2-ին Վանուատու կղզիների հատվածում (Խաղաղ օվկիանոս), որն ունեցել է 6.3 մագնիտուդ: Ձոներ եւ ավերածություններ չկան:

### ՄՊԱԾ գործակալություն

## Հտնային ծառայություն

**Անցած շաբաթ Հտնային ծառայության ծառայությունն արձանագրել է 2391 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 374 մարդ: Եղել է մանկական 180 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 40 երեխա: Գրանցվել են 25 մահ եւ 21 դժբախտ պատահար:**

հացել է անհայտ մի տղամարդ, իսկ 35-ամյա Մ. Հովակիմյանը գանգի հիմքի կտորվածքով տեղափոխվել է հիվանդանոց:

### Հունիսի 1

Քիմիական թունավորում պիտորոշմամբ Արաբկիրի 29-րդ փողոցից «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 73-ամյա Դ. Ավետիսյանը:

Դեղորայքից թունավորվել եւ հիվանդանոց է տեղափոխվել 17-ամյա Ս. Բոյաջյանը:

### Հունիսի 2

Իսակովի 29 հասցեից օձի խայթոցով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 18-ամյա Ռ. Միդեյանը:

### Հունիսի 3

Նախաբազկի կտրած վերջով Արեշից «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 60-ամյա Է. Գրիգորյանը:

Սեբաստիայի փողոցում վթարի հետևանքով ուղեղի ցնցում է ստացել եւ հիվանդանոց տեղափոխվել 69 տարեկան Վ. Դամբարյանը:

Ե. Թադեւոսյան փողոցից դեղորայքային թունավորումով «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն է տեղափոխվել 15-ամյա Դ. Բոյաջյանը:

## Եղանակի տեսություն


Մայիսի 28-ին շրջանների մեծ մասում, մայիսի 29-ին եւ հունիսի 4-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ՝ 1-15 մմ:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքի հովիտներում եւ Արարատյան դաշտում՝ +26...+31 °C, Լոռիում, Տավուշում եւ Արցախում՝ +21...+26 °C, Սյունիքի նախալեռներում եւ Լեռնային շրջաններում՝ +18...+23 °C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Լեռնային շրջաններում եւ Լոռիում՝ -2...+3 °C, Սյունիքի նախալեռներում եւ Տավուշում՝

+2...+7 °C, Արարատյան դաշտում՝ +5...+10 °C, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +10...+15 °C:

**Հունիսի 5-ին գիշերը եւ երեկոյան ժամերին հյուսիսային շրջաններում, հունիսի 6-ից 9-ը շրջանների մեծ մասում սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, տեղ-տեղ՝ կարկուտ: Քամին հարավարեւմտյան՝ 2-7մ/վրկ, ամպրոպի ժամանակ քամու ուժգնացում՝ 15-20մ/վրկ: Օդի ջերմաստիճանը հունիսի 6-7-ը կնվազի 5-6 աստիճանով:**



# միջազգային

## ՆԱՏՕ-ի փորձագետը Հայաստանում

**Հունիսի 2-ին եւ 3-ին Հայաստանում էր ՆԱՏՕ-ի փորձագետ ժամ Մալդերը, որը եկել էր իր փորձն ու գիտելիքները կիսելու երկրի նախարարություն-գերատեսչությունների ներկայացուցիչների ու լրագրողների հետ:**

ՀՓԾ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում եւ ՆԱՏՕ-ի տեղեկատվական գրասենյակում նրանց հետ համ-դիպումների ժամանակ փորձագետը պատմեց ճգնաժամային կառավարման առանցքային կետերի մասին, ինչպես նաեւ ներկայացրեց ՆԱՏՕ-ի կառուցվածքն ու գործունեությունը: Հանդիպումների ժամանակ ժամ Մալդերը նոր՝ «Աղետների կառավարման ձեռնարկ Հայաստանի համար» նախագիծը տրամադրեց ներկայանալ:

- Սա ընդամենը սեսական ձեռնարկ է, խնդրում եմ՝ կարդա՞ցե՞ք, եթե համաձայն չե՞ք ինչ-որ բանի հետ, քննե՛ք ու հիմնավորե՛լով ավելացրե՛ք ձեր տեսակետն ու լուծումները, - ասաց փորձագետը: Ժամ Մալդերի խորհուրդները

կարելու գործնական նշանակու-թյուն ունեն ճիշտ Հայաստանի փրկարար ծառայության կողմից ստեղծվելիք ճգնաժամային կառավարման կենտրոնի համար: Կենտրոնը առանցքային դեր է ունենալու աղետների ժամանակ՝ հնարավորություն ընձեռելով երկրի նախագահին ու վարչապետին, բոլոր նախարարություններին ու գերատեսչություններին՝ ճգնաժամի կառավարումը կազմակերպել մեկ կետից, ինչն էապես կնպաստի այդ աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

- Ճգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծումը Հայաստանում չափազանց կարևոր է: Այդպիսով դուք կկարողանա՞ք սեղի բնակչության հետ ավելի արդյունավետ աշխատել, - ասաց ՆԱՏՕ-ի փորձագետ ժամ Մալդերը, - ես արդեն գիտեմ, որ ձեր երկրում մի քանի հիսուսեր կան, որոնցից է, օրինակ, երկրաշարժը: Դուք միայնակ չեք կարող դա միայնակ անել, որովհետեւ Հայաստանը փոքր երկիր է: Կան շատ երկրներ, որոնք մասշտաբ են օգնել ձեզ աղետի ժամանակ: Դրանից օգնություն ստանալու միջոց-

ներից մեկն էլ ՆԱՏՕ-ին դիմելն է, որը ֆաղդաճառայնության բնագավառում ղեկավարման զգալի փորձ ունեցող կազմակերպություն է, եւ որի հետ Հայաստանը համագործակցում է «Գործընկերություն՝ հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Այդ համագործակցության արդյունքում Հայաստանը ճգնաժամի ժամանակ օգնություն կստանա դրանից, եւ իր հերթին էլ կկարողանա անհրաժեշտության դեպքում օգնել այլ երկրների:

Փորձագետը բարձր գնահատեց Հայաստանի՝ ճգնաժամային կառավարման կենտրոն ստեղծելու հնարավորությունները: Այդ հարցում նա հատկապես կարեւորեց «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի դերը:

- «Արտակարգ ալիքի» կառուցվածքը լավ հիմնավոր է մանրակրկիտ մշակված, եւ, ինչդեռ նկատեցի, սեղական լրատվամիջոցները լավ կսահություն ունեն այդ կենտրոնի հանդեպ: Սեմ չեմ կարող գործել առանց լրատվամիջոցների եւ նրանք էլ՝ առանց մեզ, որովհետեւ մենք լրատվության աղբյուր ենք: Սա երկրորդ մասն է՝ «Երթնակություն է», որը մասնաճիւղ է Հայաստանում, ճիշտ ուղու վրա է:



## սպառողների շահեր

**Սկիզբը նախորդ համարներում**

**Շատերին է ծանոթ այն հիասթափությունը, երբ հասկանում ես, որ ապրանքը, որի համար գումար ես վճարել, չի համապատասխանում պահանջվող որակին:** Տեսնում ես հայտնա-գործությունից հետո մեք հիմնականում վաճառողների հետ նույնքան տհաճ երկխոսություն չենք սկսում: Հատկապես, եթե ապրանքն այնքան էլ թանկ չէ: Գուցե իր իրավունքներն իմացող մարդու համար դա խնդիր էլ չէ: Սակայն, մեկ բան է իմանալ սեփական իրավունքները, այլ բան՝ դրանք պաշտպանելը:

Սպառողներն այսօր հիմնականում որոշ բաներ գիտեն իրենց իրավունքների մասին. ոմանք՝ հեռուստատեսությունից, ոմանք՝ թերթերից: Առավել ուշիմները նույնիսկ օրենքներ են կարդացել: Դա, իհարկե, լավ է, բայց ոչ բավարար: Գոյություն ունի սպառողների շահերի պաշտպանությանը վերաբերող՝ ձեր իրավունքները եւ վաճառողի կամ ծառայություն մատուցողի պարտականությունները կանոնակարգող իրավական ակտերի մի ամբողջ համակարգ, որի հիմքը ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն է: Դրա 31-րդ՝ «Առքուվաճառք» գլխում ներկայացված են առքուվաճառքի պայմանագրով գործարքների իրականացման կարգի ընդհանուր դրույթները:

### Գնում ենք սննդամթերք

Մանրածախ առևտրի կազմակերպություններում պետք է խս-

տորեն պահպանվեն սանիտարական նորմերը: Մեզ, որպես սպառողների, հետաքրքրում են ապրանքների բացթողմանը ներկայացվող պահանջները, ինչից կախված կլինի նաեւ ոչ պատշաճ որակի մթերքների բացթողման համար վաճառողի պատասխանատվությունը: Սննդամթերքի որակի փոփոխության հայտնաբերման դեպքում աշխատողը պարտավոր է դադարեցնել դրանց վաճառքը եւ անհապաղ այդ մասին հայտնել ղեկավարությանը՝ այդ մթերքների հետագա իրացման հնարավորության հարցը որոշելու համար: Օրենքի հոդված 8-ի վերջին պարբերությունում նշվում է, որ վաճառողի կողմից սպառողների կյանքի, առողջության եւ գույքի համար վտանգ ներկայացնող ապրանքների իրացման համար վաճառողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Գործնականում մենք երբեմն վաճառողի լիովին այլ վարքագծի ակնատես ենք լինում: Մենք վերադարձրել ենք անորակ ապրանքը, իսկ աշխատողը հանգիստ շարունակում է վաճառել այդ ապրանքները, հավանաբար հույս ունենալով, որ իրենց իրավունքների մասն պաշտպանները շատ չեն լինի:

Սանիտարական կանոններն արգելում են հում մթերքների (միս, հավ, ձուկ, ձու, բանջարեղեն եւ այլն) եւ կիսապատրաստուկների վաճառքը սպառմանը պատրաստ մթերքների հետ միասին՝ նույն տեղում: Իսկ երշիկե-

ղենի, հրուշակեղենի եւ կաթնամթերքի հարեւանությամբ պետք է արգելվի ձվի վաճառքը:

Պետք է արգելել հալված եւ կրկնակի սառեցված պաղպաղակի վաճառքը: Ընկերությունները չեն պարտավորվում աշխատողը պարտավոր է դրանք մաք-

նափակումներ: Նույն օրենքի հոդված 5-ի 3-րդ մասով սահմանվում է, որ առևտրի իրականացման վայրերում սննդամթերքի եւ ոչ պարենային ապրանքների, ինչպես նաեւ գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրան-

## Սպառողն իրավունք ունի



րել մաքուր, խոնավ կտորով: Պետք է արգելել լցնովի հյութերի իրացումը մրգերի ու բանջարեղենի բաժիններից:

Մանրածախ ցանցում՝ կրպակներում, համաձայն «Առևտրի ու ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-ի 14-րդ մասի՝ նախատեսված են վաճառվող ապրանքների տեսականու սահմա-

քախմբերի տարանջատված մեկուսամասերում:

Համաձայն «Առևտուր, տեղեկատվություն, սահմանումներ» Հայաստանի Ստանդարտի, մանրածախ առևտրի կազմակերպությունների շարքին են դասվում հարմարեցված տեղեր ունեցող, բայց առևտրի սրահ չունեցող կազմակերպությունները, որոնք առևտուրն իրականացնում են վրան-

ներից, կրպակներից, վաճառատեղանքներից, ինչպես նաեւ՝ հատուկ, շարժական առևտրի համար սարքավորված հարմարանքների միջոցով՝ ավտոխանութներ կամ ավտոտեսղաններ, ձեռքի սայլակներ, զամբյուղներ եւ այլն:

Եթե ապրանքների բացթողումն իրականացվում է ոչ թե փողոցից, այլ վաճառքի սրահներից, ապա սպառողը պետք է հնարավորություն ունենա ստուգելու գնված ապրանքի քաշը, ծավալը եւ այլ ցուցանիշներ:

Համաձայն «Առևտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 4-ի՝ առևտրի օբյեկտը պետք է ապահովված լինի օրենքով սահմանված կարգով ստուգաչափված կշեռքներով, կշեռքարեթով եւ չափման այլ համապատասխան թույլատրելի միջոցներով: Հաշվի առնելով Օրենքով սպառողին վերապահված գնված ապրանքը ստուգելու իրավունքը, պետք է կարծել, որ վաճառողն այդ կշեռքներից կտեղադրի վաճառքի սրահում, որպես հսկիչ կշեռք եւ հնարավորություն կտա սպառողին ստուգելու գնված ապրանքի քաշը: Դրանց բացակայության դեպքում իրաւ կարող եք բողոքել՝ ձեր իրավունքների պաշտպանության նպատակով:

Չի կարելի թույլատրել ընտրված ապրանքի հետ պահանջարկ չունեցող ապրանքներ՝ որպես վերադրի, վաճառել: Հիշե՛ք, որ սպառողն ունի Օրենքով սահմանված ընտրության իրավունք:

**Շարունակելի**

«Սպառողների շահերի պաշտպանության միություն» ՀԿ





## Տերմինների բառարան



**Տերմինաբանական այս բառարանը մշակվել է ՄԱԿ-ի կողմից՝ տվյալ բնագավառի մասնագետների աջակցությամբ և պարունակում է տարերային աղետների ռիսկի նվազեցման ոլորտի հիմնական սահմանումները: Բառարանի ստեղծման հիմնական նպատակն է ապահովել խնդրի առավել խոր և բազմակողմանի ըմբռնումը: Նախատեսված է մասնագետների, իշխանությունների և հասարակության տարբեր խավերի օգտագործման համար:**

### Թույլատրելի ռիսկ

Վնասի մակարդակ, որը հասարակությունը կամ հանրությունը ընդունելի է համարում՝ հաշվի առնելով առկա սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային, տեխնիկական և բնապահպանական պայմանները: Ինժեներական տերմինաբանության մեջ թույլատրելի ռիսկն օգտագործվում է կառուցվածքային և ոչ կառուցվածքային բնույթի միջոցառումները գնահատելիս, որոնք ձեռնարկվում են հնարավոր վնասը նվազեցնելու համար, և մշակում է բնակչության և ունեցվածքի անվտանգության ապահովման մակարդակը՝ համաձայն ընդունված նորմերի կամ «ընդունված» փորձի, որոնք, ի թիվս այլ հանգամանքների, հիմնված են սպառնալիքի առաջացման հավանականության վրա:

### Կենսաբանական վրանգ

Օրգանական ծագման կամ կենսաբանական փոխանցողներով պայմանավորված գործընթացներ՝ ներառյալ ախտածին միկրոօրգանիզմների, տոքսինների, կենսաբանական ակտիվ էախիմիկների ներգործությունը, որոնք կարող են հանգեցնել մահվան

կամ մարմնական վնասվածքների, ունեցվածքի կորստի, սոցիալական ու տնտեսական ցնցումների և էկոլոգիական հետընթացի: Կենսաբանական վտանգի օրինակներ են համաճարակային հիվանդությունների բռնկումները, կենդանիների ու բույսերի վարակումը, միջատների հարձակումը (արշավները) և մակաբույծներով վարակումը:

### Շինարարական նորմեր

Կարգադրություններ և կանոններ, որոնք կարգավորում են ցանկացած շենքի ու շինության մասնագծում, շինարարությունը, նյութերը, փոփոխություններն ու բնակեցումը՝ մարդկանց անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու նպատակով: Շինարարական նորմերը ներառում են ինչպես տեխնիկական, այնպես էլ գործառնական չափանիշներ:

### Ներուժ (կարողություն, պոտենցիալ)

Բնակչության, հասարակության կամ կազմակերպության բոլոր ուժերի ու ռեսուրսների համատեղում, որը կարող է նվազեցնել ռիսկի աստիճանը կամ աղետի հե-

տեւանքները: Ներուժը կարող է ընդգրկել ֆիզիկական, ինստիտուցիոնալ, սոցիալական կամ տնտեսական հնարավորություններ, ինչպես նաև որակավորված անձնակազմ կամ կոլեկտիվ հատկություններ, ինչպիսիք են առաջնորդումն ու կառավարումը: Ներուժը կարելի է բնութագրել նաև որպես ընդունակություն:

### Ներուժի կառուցում

Ռիսկի մակարդակի նվազեցման կարիք ունեցող հասարակության կամ կազմակերպությունների սոցիալական ենթակառուցվածքների, մարդկային հմտությունների գարգացմանն ուղղված ջանքեր: Ավելի լայն հմաստով կարողությունների (պոտենցիալի) կառուցումը ենթադրում է զարգացում ինստիտուցիոնալ, ֆինանսական, քաղաքական և այլ ռեսուրսների, որոնցից է հասարակության տարբեր խմբերի ու մակարդակների տեխնոլոգիան:

### Կլիմայի փոփոխություններ

Որոշակի տեղանքի կամ շրջանի կլիման փոփոխվում է, եթե երկար ժամանակի (սովորաբար տասնամյակների կամ ավելի երկար ժամանակաշրջանի) ընթացքում նկատվում է վիճակագրական տվյալներով արձանագրված միջին չափորոշիչների նշանակալի փոփոխություն կամ տվյալ տեղանքի կամ շրջանի կլիմայի ընդհանուր անկայունություն: Կլիմայի փոփոխությունը կարող է պայմանավորված լինել բնական գործընթացներով կամ մթնոլորտում ու հողօգտագործման բնագավառում անընդհատ տեղի ունեցող մարդածին փոփոխություններով: Ուշադրություն դարձրեք, որ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխությունների մասին կոնվենցիայում «կլիմայի փոփոխություններ» արտահայտությունն ավելի ճշգրիտ իմաստ ունի, քանի որ ներառում է միայն այն փոփոխությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի ձեռով կապված են մարդու գործունեության հետ:

### Հաղթահարման ներուժ (կարողություններ, պոտենցիալ)

Միջոցներ, որոնք օգնությանը մարդիկ և կազմակերպություններն օգտագործում են իրենց ու-

նեցած ռեսուրսներն ու հնարավորությունները՝ հաղթահարելու բացասական հետևանքները, որոնք կարող են աղետի հանգեցնել: Ընդհանուր առմամբ՝ խոսքը վերաբերում է ռեսուրսների կառավարմանը՝ ինչպես նորմալ ռեժիմում, այնպես էլ ճգնաժամների կամ անբարենպաստ պայմանների ժամանակ: Հաղթահարման կարողությունների ամրապնդումը սովորաբար բարձրացնում է բնական ու տեխնածին սպառնալիքների հետևանքներին դիմակայելու ունակությունը:

### Պատասխան միջոցներ

Ցանկացած միջոցներ՝ ուղղված տարերային աղետների ռիսկի նվազեցմանն ու հակազդեցությանը: Դրանք գլխավորապես իրենց մեջ ներառում են ինժեներական (կառուցվածքային) բնույթի միջոցներ, սակայն կարող են ընդգրկել նաև ոչ կառուցվածքային միջոցներ ու մեթոդներ, որոնք մշակվել են կիրառվում են բնական սպառնալիքների կամ դրանց հետ կապված էկոլոգիական ու տեխնածին աղետների անբարենպաստ հետևանքները սահմանափակելու կամ դրանցից խուսափելու համար:

### Աղետ

Հասարակության գործառնությունների լուրջ խախտում, որը կարող է հանգեցնել լայնածավալ մարդկային, նյութական, տնտեսական, էկոլոգիական կորուստների, որոնք գերազանցում են տուժած միության կամ հասարակության՝ դրանք սեփական ռեսուրսներով հաղթահարելու ունակությունը: Աղետը գործընթացի գործառնություններից մեկն է ռիսկի պայմաններում: Այն ծագում է սպառնալիքի, խոցելիության պայմանների և ռիսկի բացասական հետևանքների նվազեցմանն ուղղված կարողությունների կամ ջանքերի թուլությունը համադրելու արդյունքում:

### Տարերային աղետների ռիսկի կառավարում

Հասարակության՝ բնական սպառնալիքների ու դրանց հետ կապված տեխնածին ու էկոլոգիական աղետների ազդեցության նվազեցման նպատակով քաղաքական որոշումները, ռազմավարությունները և ներուժն իրակա-

նացնելիս վարչական որոշումների իրականացման, կազմակերպական ու օպերատիվ ունակությունների և հմտությունների պարբերական կիրառման գործընթաց: Այն ընդգրկում է գործունեության բոլոր ձևերը՝ ներառյալ կառուցվածքային և ոչ կառուցվածքային բնույթի, որոնք ուղղված են սպառնալիքների անբարենպաստ հետևանքներից խուսափելուն (կանխարգելում) կամ սահմանափակմանը (հետևանքների մեղմում և պատրաստվածություն):

### Տարերային աղետների ռիսկի նվազեցում

Բաղադրիչների հայեցակարգային կառուցվածք՝ հասարակության մեջ տարերային աղետներից խոցելիությունը նվազագույնի հասցնելու հնարավորության և ռիսկի նվազեցման հաշվով, որպեսզի կայուն զարգացման ընդհանուր ենթատեքստում հնարավոր լինի խուսափել (կանխարգելում) կամ սահմանափակել (հետևանքների մեղմում և պատրաստվածություն) սպառնալիքների անբարենպաստ ազդեցությունը: Տարերային աղետների ռիսկի նվազեցման հայեցակարգը բաղկացած է հետևյալ գործողություններից՝

Ք ռիսկի ընկալում և գնահատում՝ ներառյալ սպառնալիքների, խոցելիության և կարողությունների վերլուծությունը:

Ք գիտելիքների ընդլայնում՝ ներառյալ կրթությունը, ուսուցումը, հետազոտություններն ու իրազեկումը:

Ք հասարակական պարտավորություններ ու ինստիտուցիոնալ կառուցվածքներ՝ ներառյալ կազմակերպական, քաղաքական, օրենսդրական և հասարակական բնույթի միջոցները:

Ք որոշակի միջոցների կիրառում՝ ներառյալ էկոլոգիական կառավարումը, հողօգտագործումն ու քաղաքային պլանավորումը, կարելու օբյեկտների պաշտպանությունը, գիտության տեխնոլոգիայի օգտագործումը, համագործակցությունն ու ցանցերի ստեղծումը, ֆինանսական գործիքները:

Ք վաղ ազդարարման համակարգ՝ ներառյալ կանխատեսումը, կանխարգելումը, պատրաստվածությունը և արձագանքումը:

Շարունակելի

## Արդյունավետ մասնակցություն

2009 թ. մայիսի 15-16-ին Թալին քաղաքում անցկացվեց «մարզական փառատոն», որը կազմակերպել էր Թալինի քաղաքապետարանը: Նման միջոցառումներն անկասկած նպաստում են սպորտի զարգացմանը: Փառատոնին մասնակցում էին քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների և ուսումնական հաստատությունների թիմերը: Հասկանալի ու սպասելի էր նաև Թալինի ՀՓՁ-ի ակտիվ ու արդյունա-

վետ մասնակցությունը փառատոնին: ՀՓՁ-ի հրամանատար Ս. Ֆահրադյանի և հրամանատարի տեղակալ Ա. Համբարձումյանի գլխավորությամբ հանդես եկող թիմն իր ծանրակշիռ խոսքն ասաց բոլոր մարզաձեւերում ու արժանացավ պատվոգրի: Արժե նշել ՀՓՁ-ի՝ առանձին մարզաձեւերում ցուցաբերած հետեյալ արդյունքները. վոլեյբոլ մարզաձեւից 2-րդ տեղը, մինի ֆուտբոլից 3-րդ տեղը, պարա-

մի մազլցում մարզաձեւից ՀՓՁ-ի հրշեջ երվանդ Մարկոսյանի նվաճած առաջին տեղը և կշռաքարի բարձրացում մարզաձեւից ՀՓՁ օղակի հրամանատար Ավետիք Մարգարյանի գրաված 3-րդ հորիզոնականը:

Հ. Կարապետյան  
Արագածոտնի ՄԶՎ  
Բնակչության  
պաշտպանության  
բաժնի պետ, փ/ծ մայր



# Օգտակար խորհուրդներ

## Վիտամինները նվազեցնում են ֆիզիկական վարժությունների օգտակարությունը

Եթե դուք մարմնամարզությանը ենթարկվում եք ցածր ֆիզիկական ակտիվության լավագույն, ինսուլինի յուրացման եւ շաքարախտի կանխարգելման համար, ապա ավելի ճիշտ կլինի չօգտագործել հակաօքսիդանտներ, ինչպիսիք են օրինակ վիտամին C-ն ու E-ն, պնդում է Նյու Յորք Թայմսը՝ մեքսիկացի հետազոտողների ամենավերջին կարծիքն այս ոլորտում:

Ինչպես հայտնի է, ֆիզիկական վարժությունները շատ օգտակար են: Բժիշկները հաճախ են շաքարախտի հակում ունեցող հիվանդներին խորհուրդ տալիս ֆիզիկական ակտիվ լինել, նշում է հոդվածի հեղինակ Նիկոլաս Վեյդը:

Բայց ֆիզիկական վարժությունները ստիպում են մկանային բջիջներին քայքայել գլյուկոզան, միացնել ածխաջրերը եւ թթվածինը՝ դուրս բերելով ստացված էներգիան: Այդ պրոցեսի արդյունքում թթվածին որոշ ակտիվ մոլեկուլներ արտազատվում են ու քիմիական հարձակ-



ման ենթարկում իրենց ճանապարհին հանդիպող հյուսվածքները:

Ըստ հոդվածագրի, թթվածին այս ակտիվ միացումները հայտնի են հյուսվածքների վրա ունեցող իրենց կործանարար ազդեցությամբ: Թթվածնային ավերների քանակն օրգանիզմում ավելանում է տարիքի հետ եւ, ծերացման տեսության համաձայն,

դրանք են օրգանիզմի ծերացման հիմնական պատճառը:

Օրգանիզմը թթվածնային ավերների դեմ պայքարի սեփական համակարգն ունի, սակայն դա երբեմն բավարար չի լինում: Այնպես որ, հակաօքսիդանտները, որոնք արգելափակում են ռեակտիվ թթվածնային միացությունները, կարող էին խնդրի լուծում լինել:

Գիտնականները Գերմանիայի Իենի համալսարանի դիտորդ դոկտոր Մայքլ Ռիսթոուի ղեկավարությամբ ստուգել են այս ենթադրությունը երիտասարդների մի խմբի վրա, որոնք ֆիզիկական վարժություններ էին կատարում՝ զուգահեռաբար ընդունելով C եւ E վիտամինների փոքր չափաբաժիններ: Փորձի ավարտին պարզ դար-

ձավ, որ այն ենթախնդրում, որտեղ վիտամին էին ընդունել, ինսուլինի յուրացման բարելավում տեղի չէր ունեցել եւ թթվածնային ավերների հանդեպ օրգանիզմի պաշտպանական բնական մեխանիզմները չէին էլ միացել:

Գիտնականների կարծիքով, պատճառն այն է, որ ֆիզիկական վարժությունների անխուսափելի արդյունք հանդիսացող թթվածնային ակտիվ միացությունները պաշտպանական մեխանիզմի գործի անցնելու բնական խթանն են: Իսկ վիտամինները, քայքայելով ակտիվ թթվածինը, արգելափակում են օրգանիզմի բնական արձագանքը:

- Եթե դուք առողջության բարելավման համար վարժություններ եք անում, ապա պետք չէ մեծ քանակով հակաօքսիդանտներ ընդունել, - նշում է Ռիսթոուն, - բացի դրանից հակաօքսիդանտները այնպիսի ռեակցիաներ են առաջացնում, որոնք խոչընդոտում են վարժությունների, դիետաների եւ այլ միջամտությունների արդյունավետությանը:

## Օգտակար է, թե՛ ոչ

Բժիշկները պնդում են, որ լյարդի ցիրոզով հիվանդանալու պատճառն ալկոհոլի չարաչափաբար օգտագործել վերը նշված նպատակների համար:

Սխալ է նաեւ այն կարծիքը, որ ուշ երեկոյան ընդունած սնունդը վերածվում է ճարպի, իսկ նախաճաշին կերածն օրգանիզմն ամբողջությամբ յուրացնում է: Մարդիկ գիրաբանում են շարժումների պակասից եւ առատ սննդից, այլ ոչ թե ուտելու ժամանակից: Այլ խնդիր է, որ քնելուց առաջ շատ ուտելիս իսկապես վնասակար է: Շատ գիտնականներ գտնում են, որ հասուն մարդիկ ընդհանրապես ուտել կարող են սկսել միանգամից ճաշից, այսինքն կեսօրից հետո: Իսկ առավոտյան մի լավ նախաճաշելու անհրաժեշտության մասին տարածված կարծիքը, որոշ տեղեկությունների համաձայն, շրջանառության մեջ են դրել նախաճաշի համար եզրակացությունների փաթիլներ արտադրող ամերիկյան ընկերությունները:

ակի ժամանակում, իսկ հարցերին պատասխանել առանց երկար մտածելու:

Շատ մարդիկ մինչեւ հիմա հավատում են, որ գորտերին կամ դորձներին դիպչելուց հետո ձեռքի վրա գորտնուկներ են առաջանում: Դա բոլորովին չի համապատասխանում իրականությանը: Երկյենցաղններն այստեղ ոչ մի մեղք չունեն, քանի որ գորտնուկները հայտնվում են նաեւ այն մարդկանց ձեռքերին, ովքեր երբեք այդ կենդանիներին չեն դիպել: Մինչ օրս բժիշկները չեն կարողանում պարզել դրանց առաջացման իրական պատճառը:



Դեմքի խնամքի համար նախատեսված բազմաթիվ ժամանակակից խոնավացնող քսուքներ արտադրողները պնդում են, որ դրանք վերացնում են կմախքները, կանխում նորերի առաջացումը եւ հարթում դեմքի մաշկը: Սրանք շատ կասկածելի պնդումներ են, քանի որ ոչ մի քսուք առայժմ չի կարող այնքան խոր թափանցել մարդու մաշկի մեջ, որ հասնի կմախքները առաջացնող ներքին շերտին: Նույնը կարելի է ասել նաեւ կոլլագենային կրեմների վերաբերյալ, որոնք, իբր, օգնում են վերականգնել թառամած մաշկը: Խնդիրն այն է, որ կոլլագենի մոլեկուլները չափազանց խոշոր են մաշկի խոր շերտերը թափանցելու եւ դրա «չինարարությանը» մասնակցելու համար:

Մի գերմանացի գիտնական, մարդկային ուղեղի մեջ ֆոսֆորի հայտնաբերելով, եզրակացնում է, որ այն խթանում է ուղեղի աշխատանքը եւ հայտարարում, թե սննդի մեջ ձկնեղեմի օգտագործումը նպաստում է դրան: Այդ ժամանակից ի վեր ոչ ոք այս կարծիքը կասկածի տակ չի առել: Բժիշկները եւս, հիմնվելով այն փաստի վրա, որ ձկան մեջ ֆոսֆորի պարունակությունը բարձր է, մարդկանց խորհուրդ էին տալիս գլխուղեղի աշխատանքը լավացնելու համար ձկնեղեմ շատ ուտել: Իրականում ուղեղի նորմալ աշխատանքում ֆոսֆորն ընդհանրապես որեւէ դեր




չի խաղում: Իսկ եթե անհրաժեշտ է պարզապես լրացնել օրգանիզմում ֆոսֆորի պաշարը, ապա իմացեք, որ այն պարունակվում է ոչ միայն ձկան, այլեւ խնձորի, բանջարեղենի եւ կաթի մեջ:

Սարսափի ֆիլմերը մշտապես քննադատության են ենթարկվում այն բանի համար, որ բացասաբար են ազդում մարդու հոգեկանի վրա եւ նպաստում իրական կյանքում ազդեցիկության աճին: Սակայն ամեն ինչ այդքան պարզ չէ: Զոգեբանները գտնում են, որ քաղաքակրթությունն անում է ամեն

հնարավորը, որպեսզի մարդը պատրաստ լինի դիմակայելու գանազան բնական եւ տեխնոստիկ աղետների: Նրանց կարծիքով ժամանակակից մարդը չափազանց հարմարավետ պայմաններում է ապրում, իսկ տարբեր տիպաբանությունների ու դժբախտությունների մասին պատմող սարսափի ֆիլմերը նյարդային համակարգի համար յուրատեսակ մարդուններ են: Սակայն այս ամենը վերաբերում է միայն այն ֆիլմերին, որոնք որոշ հոգեբանական խորություն ունեն: Այն կինոկարները, որոնցում բռնության տեսարանները չափազանց շատ են, իսկ միտքը քիչ, ճնշող ազդեցություն են ունենում մարդու հոգեկան աշխարհի վրա եւ բացառում ինքնապահպանության զգացումը:

Որոշ ծնողներ նախկինում գտնում էին, որ ձվի մանրացված կեղևն օգտակար է երեխայի ոսկորների ամրության եւ ատամները կարիեսից պաշտպանելու համար: Սակայն ներկայումս ատամնաբույժներն ապացույցներ չունեն, որ ձվի կեղևն իսկապես կարող է կանխել կարիեսը: Ի դեպ, հարց է նաեւ, թե արդյոք կալցիումը կեղևից անցնում է արյան մեջ: Այդ պատճառով բժիշկները կարիեսի դեմ պայքարի այլ միջոցներ են



նախընտրում երեխաներին խորհուրդ տալով ավելի շատ կաթնաշոռ ուտել, որի մեջ նույնպես մեծ քանակությամբ կալցիում կա: Էլ չենք խոսում այն մասին, որ այն ձվի կեղևից ավելի համեղ է:



տակեղենը լվալու եւ սնունդ պատրաստելու համար: Բայց դա շուրջ հարյուր կամ երկու հարյուր տարի առաջ էր: Այժմ ոչ ոք հստակ չի կարող ասել, որ անձրեաջուրն այդ-



# արտակարգ ժամանց

## Կենդանիների աշխարհում

### Փրկել ու գրկվել աշխատանքից

Պարզվում է, որ կենդանիների նկատմամբ սերը կարող է լուրջ սպառնալիք լինել բարձր վարձատրվող աշխատանքի համար: Այն էլ հիմա, երբ համաշխարհային ճգնաժամի պայմաններում աշխատանք կորցնելն ավելի հեշտ է, քան գտնելը:

Գերմանիայի Ռեգենսբուրգ քաղաքում կին վարորդ, 46-ամյա Քրիստինա Փոմերալը փորձելով փրկել ճանապարհին հայտնված գորտին՝ իր երկիրականի ավտոբուսը կանգնեցնում է մայրուղու մեջտեղում: Ուղեորներից մեկը բողբ է գրում տրանսպորտային ընկերություն՝ գանձատվելով, թե վարորդը վտանգի է ենթարկել իրենց կյանքը: Տրանսպորտային ընկերության

տնօրինությունն իր հերթին հայտարարում է, թե վարորդը չպետք է կանգնեցնի ավտոբուսը: Քրիստինան ասում է, որ չէր կարող նման բան անել:

«Ճանապարհի կեսին էր, ես դանդաղեցրի արագությունը, միացրեցի վթարային լույսերը, այնուհետև դուրս եկա ավտոբուսից, գորտին տեղադրեցի ստվարաթղթե արկղի մեջ ու տեղափոխեցի ապահով վայր՝ ճանապարհից հեռու, որից հետո ավտոբուսը շարունակել է իր երթուղին», - պատմել է Քրիստինան: Այնուամենայնիվ, տրանսպորտային ընկերության ղեկավարությունն անդրդվել է մնում եւ աշխատանքից ազատում կնոջը, որն աշխատել էր ավելի քան 13 տարի: Իմիջիայլոց՝ Քրիստինայի ամսական աշխատավարձը մոտ երեք հազար դոլար էր:

### Նրեղեն... կրետը

2004 թ. աշնանը Գերմանիայի Դրեբախ քաղաքում կրետը հրդեհի պատճառ է դառնում: Այրվող միջատը թռչում է առանձնատան տանիքի տակ թաքնված իր բույնը, որտեղից էլ կրակը տարածվում է ամբողջ տան տարածքով:

Տեղի ոստիկանության տվյալներով շինարարները տան տանիքում վերանորոգման աշխատանքներ էին իրականացնում, եւ այնտեղ բուն դրած կրետների պարսը խանգարում էր նրանց, որովհետեւ բանվորները վնասել էին կրետների բույնը: Միջատներից պաշտպանվելու համար բանվորներից մեկը գործի է դնում գործան լամպը: Արդյունքում՝ կրետները սկսում են այրվել: Նրանցից մեկը թռչում է դեպի



բույնը: Դրա հետեւանքով բույնը բռնկվում է, կրակի բոցերը տարածվում են ձեղնահարկում, ապա տանիքում ու սպառնում կլանել ամբողջ տունը: Ժամանակին վրա հասած հրշեջները կարողանում են արագ հանգցնել հրդեհը, սակայն կրակը տանտիրոջը շուրջ 2500 դոլարի վնաս է պատճառում:

### Այծերը՝ կանխարգելիչ

Միացյալ Նահանգների իշխանություններն անտառային հրդեհների դեմ պայքարելու շատ արտասովոր, բայց միաժամանակ արդյունավետ միջոց են գտել: Կալիֆոռնիայի խիտ բնակեցված ու փարթամ բուսականությամբ պատված շրջաններ են բաց թողնվել հազարավոր քաղցած... այծեր:

2005 թ. այծերին պաշտոնապես աշխատանքի են ընդունել ազգային անվտանգության ծառայություն: Կենդանիներն առանց որել է դժվարության ոչնչացնում են խոտի ծիլերը, որոնք բարձր ջերմաստիճանի ու չոր եղանակի հետեւանքով հաճախ են հրդեհի պատճառ դառնում: Դրանից բացի՝ այծերը ոչնչացնում են նաեւ տեղի ատոմակայանի բարձրավոլտ լարերի տակ աճած թփերը, որոնք եւս կարող են կրակի պատճառ դառնալ:

Կալիֆոռնիայի ագարակատերերը նույնպես բավական լավ գումար են աշխատում՝ իրենց այծերին վարձավճարով «հատկացնելով» անվտանգության ծառայությանը:

### Կծել օձին

Վերջերս հսկա վիշապօձը հարձակվել է Քենիայի Մալինդի շրջանում աշխատող բատրակ Բեն Նայոմբեի վրա: Բենը պատահաբար ոտքը դրել էր ինչ-որ կոշտ «առարկայի» վրա, իսկ վայրկյաններ անց օձը փաթաթվել էր նրա մարմնին ու քարշ տալով բարձրացրել ծառի վրա: Սողունի ու մարդու պայքարը շարունակվել է գրեթե երեք ժամ, եւ, բարեբախտաբար, ավարտվել մարդու հաղթանակով:

Բենը կծել է օձի պոչը, ինչը ստիպել է սողունին մի փոքր թուլացնել երկաթե օղակներն ու տղամարդուն բջջային հեռախոսով զանգելու հնարավորություն տվել: Ագարակատերը, որի ֆերմայում աշխատում էր Բենը, ոստիկանների հետ եկավ նրան օգնության:

Դեպքի վայր ժամանած ոստիկաններից մեկը պատմում է.

«Երբ մենք տեղ հասանք, օձն արդեն մարմնի գալարներով ամուր գրկել էր իր զոհին ու փորձում էր նրան կոշտ տալ: Բենն ամբողջ ուժով դիմադրում էր: Սա, ընդհանրապես, շատ արտասովոր դեպք է: Մինչ այդ ես երբեք չէի լսել, որ օձը մարդուն ծառը բարձրացնի»:

Ոստիկանները սկզբում որոշել էին կրակել օձի վրա, սակայն հետո, մտածելով, որ կարող են մարդուն վնասել, այլ որոշում են կայացրել: Տեղի բնակիչների հետ նրանք պարաններով փաթաթել են իրար գրկախառնված վիշապօձին ու մարդուն եւ նրանց ցած իջեցրել ծառից: Օձին կծելիս Բենը կտրել էր շրթունքը, քանի որ, ինչպես պարզվել էր, նրա պոչը «չափազանց կոշտ ու սուր էր եղել»:

Օձին տեղափոխում են Մալինդիի արգելանոց, որտեղից սակայն սողունը փախչում է՝ դուրս սողալով սենյակի դռան տակից: Ոստիկանները մտադիր են բռնել նրան, քանի որ սողունը լուրջ վտանգ է ներկայացրել տեղի բնակիչների համար:

### Արտասովոր փաթեթը

2006 թ. անռանց Բեռլինի փոստատան աշխատակցուհիներից մեկը քիչ էր մնացել, որ ուշագնաց լինի՝ տեսնելով թե ինչպես է առաքման համար նախատեսված փաթեթը շարժվում: Իրականում այնտեղ ոչ մի գերբնական բան չկար: Արկղի մեջ 1,5-մետրանոց վիշապօձ էր, որին մարդու փոքրիկ արկղն այդքան էլ դուր չէր եկել:

Պարզվում է՝ 28-ամյա մի գերմանուհի ինտերնետի օգնությամբ վաճառել է իր օձին եւ այն նոր տիրոջն ուղարկելու առավել մատչելի ու հարմար տարբերակ չի գտել, քան սովորական փոստային ծառայությունը: Հնարամիտ աղջիկն օձին տեղավորել է արկղի մեջ ու վրան գրել.

«Ձգույշ, ապակի է»: Փոստատան աշխատակիցներն առանց որել է բան կասկածելու վերցնում են փաթեթը, գրանցում եւ տեղավորում պահեստում: Որոշ ժամանակ անց արկղը սկսում է շարժվել, իսկ հետո այնտեղից մի հսկա օձ է դուրս սողում: Փոստատանը խուճապ է բարձրանում, աշխատակիցները սկսում են վախեցած այս ու այն կողմ վազել: Բարեբախտաբար, նրանցից մեկը գիտեր, թե ինչպես պետք է վարվել օձերի հետ: Հենց նա էլ սողունին բռնում է ու փակում սենյակներից մեկում՝ մինչեւ համապատասխան ծառայությունների ժամանումը:

Քանի որ տեղի օրենքների համաձայն՝ օձերին փոստով ուղարկելն արգելված չէ, աղջկա նկատմամբ քրեական գործ է հարուցվել կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունք ցուցաբերելու մեղադրանքով:

Անգլիական ֆուտբոլի ակումբ	Սիրային երգ	... Ֆրենկել Դատարկ, անհիմն	Մեղմ, հանդարտ գիտնական	Հին հույն աշխարհագրագետ	Հայ գրող ... Բակունց
↔	↔	↔	↔		
Պետություն Չրվ. Ամերիկայում	↔			Վտիտ, բարակ	Փշոտող պայթուցիկ նյութի լիցք
↔			Վանք Վայրց Չորում Արաբական էմիրաթ	↔	↔
Մար բարբառային ժխտում, հակառակում	↔	Չայնի ուժգնության միավոր ... Պարթեւ	↔		
↔			↔	Բուրմունք Չոր բարբառային	Օրվա պահ
Օպերայի եւ ...ի թատրոն	↔	Կաշվի մշակման արհեստանոց Քարտեզ		↔	↔
↔	Մարգարական առագաստանավի տիպ	Ծավալուն աշխատության մի մասը	↔		Հայկական ամսաթերթ Մալորի ծառ
↔				Մասիս	↔
	Երեւանի ավտոգործարանի արտադրանք	Ուս ժողովրդական երգչուհի Լյուդմիլա ...	↔	Արեւելյան մարզածեւ Կիբիարի ակիբ օվկիանոսում	↔
↔			Ձի մանր կաթիլ. շաղ Պետական պաշտոնյա	↔	Սուկ, միայն Պետության զինված ուժերը
	Եռանկյունաչափական ֆունկցիա Կոկա ...	↔	↔	↔	Քիմիական տարր
Հայ մեծ երգահան	↔	Եռանկյունաչափական մարմին	↔	Ի՞նչ է պղկան	↔
↔				Սեւամորթ ռասայի ներկայացուցիչ	↔
Առաջին տիեզերագնացը Յուրի ...	↔	Խոնավ	↔	↔	Պետություն եվրոպայում
↔				↔	Զգացմունքի բուն արտահայտություն